ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2001 թվականի նոյեմբերի 20-ին

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
(վերնագիրը փոփ. 17.11.17 ՀՕ-213-Ն)

Հոդված 7. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՆԸՆԴՄԵՋ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Էկոլոգիական անընդմեջ կրթությունը ներառում է հետևյալ մակարդակները.

ա) նախադպրոցական էկոլոգիական կրթություն և դաստիարակություն (էկոլոգիական կրթությունն ընտանիքում և նախադպրոցական հաստատություններում).

բ) միջնակարգ էկոլոգիական կրթություն.

գ) միջին մասնագիտական էկոլոգիական կրթություն.

դ) բարձրագույն ~~մասնագիտական~~ էկոլոգիական կրթություն.

~~ե) հետբուհական էկոլոգիական կրթություն.~~

զ) հասարակության լայն խավերի էկոլոգիական կրթություն և դաստիարակություն, այդ թվում՝ զինված ուժերում:

Կրթության համակարգի բոլոր օղակներում էկոլոգիական ուղղվածության առարկաների դասավանդումն իրականացվում է պետական կրթական չափորոշիչներին, ինչպես նաև կայուն զարգացման սկզբունքներին համապատասխան:

Էկոլոգիական կրթությունը հանրակրթական (այդ թվում՝ նախադպրոցական) մակարդակում իրականացվում է էկոլոգիական ուղղվածություն ունեցող առարկաներում (ուսումնական պարապմունքներում) ներառված թեմաների միջոցով:

(7-րդ հոդվածը խմբ. 17.11.17 ՀՕ-213-Ն)